




ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՀԸ

1907 թվականն էր:

Աշուն էր. հոկտեմբեր ամիսը:

Արարատյան դաշտում, սովորաբար, այդ ամիսը այգեկույթի ամիսն է, ինչպես և բամբակաքաղի: Արևոտ և անուշ օրեր են լինում այնտեղ խորը աշնան: Անձրևները սկսում են նոյեմբերին. իսկ ձմեռը սկսվում է հագիվ դեկտեմբերին: Ծառ քիչ է պատահում այնտեղ ծա՛նր ձմեռ:

1907 թվին մեկ ինչ-որ արտասովոր երեվոյթ էր կատարվում Արարատյան աշխարհի բնության մեջ:

Այդ տարին հոկտեմբերեն սկսվեց աշնանային միապաղաղ, անվերջ և տաղտկալի անձրևով, որին, ամսի 20-ից սկսած, հետևեց մի տեսակ փափուկ, այսպես ասած, խոնավ ու ծանր ձյուն, որը ահագին վնասներ պատճառեց, մասնավորապես, այգիներին, յուր ծանրությամբ կոտրատելով անթիվ ծառեր...

Ժողովուրդը տակավին յուր ձմեռվան պատրաստությունը չէր տեսել: Ու այդ իսկ պատճառով սոսկալի թվաց նրան անժամանակ ձմեռը: Զյունը տևեց երեք օր շարունակ, անընդհատ գիշեր և ցերեկ:

* *

Ես ս. Էջմիածնի Սինոդի անդամ էի:

Նաև հայրապետական դիվանի դիվանապետ:

Հոկտեմբերի 26-ին, ուրբաթ, ճաշից հետո, ժամը 3-ին, Սինոդի հերթական օրագրները, որքան կնիշեմ, չորս հատ, տարի Վեհափառ Հայրիկին ստորագրել տալու:

Սինոդի բոլոր օրագրները ստորագրում էր նաև կաթողիկոսը, իբրև նախագահ, որից հետո՝ օրագրներն ուղարկվում էին Սինոդի պրոկուրորին ի ստորագրություն:

Օրինական այս ձևակերպությունները կատարվելուց հետո միայն օրագրները ստանում էին իրենց օրինասահման ույծը:

Մտնելով ներս, այսպես կոչված, Վեհաբանի առաջին դահլիճը, գտա Հայրիկին յուր սովորական բազմոցին վրա նստած՝ վառարանի կողքին: Վառարանը անխնա կվառվեր. ապաստվորները ամեն ճիգ կթափեին Հայրիկի սենյակները լավ տաքացնելու համար:


Հայրիկը, նկատելով ինձ, հարցրեց.

— Հը՞, ի՞նչ կա. ինչո՞ւ ես եկել. օ՛ֆ, դարձյալ թո՞ւյթ ես բերել ստորագրելու. օ՛ֆ, ամա՛ն, չեմ կրնար այժմ. տար, հետո կբերես:

Լսելով այս խոսքերը, ուզեցի անմիջապես հետ դառնալ, առանց ունե՛խոսք ասելու: Ու հագիվ թե երկու քայլ արած էի, երբ հետևիցս ձայն տվեց.

— Հուսի՛կ վարդապե՛տ, Հուսի՛կ վարդապետ, բե՛ր թղթերը, բե՛ր, որ ստորագրեմ: Հետ դարձա:

Ծաթիքը բերեց մյուս դահլիճեն (ծաղկյա) փոքրիկ կարմիր սեղանը, գրիչն ու կաղամարը և հարմարեցնելով՝ դրեց Հայրիկի դիմացը: Հայրիկը հագած ուներ յուր սովորական սամույրի քյուրքը և ծնկներն էլ փաթաթել էր ազնիվ բրդյա վերմակով: Ակնոցները դնելով՝ առավ գրիչը և կուզեր ստորագրել, առանց լսելու իմ բացատրությունը, օրագրի



Խորհման Հայրիկ տապանաքարը և Էջմիածնի Մար տաճարի զանգակատան
հարավ-արևմտյան մասում

քովանդակությունը, սակայն ձեռքերը չափազանց կողողացին, մինչ այն աստիճան, որ գրչակոթը չէր կարողանում հարկավոր ամբողջությամբ բռնել: Ու գրչակոթը ձեռքեն ընկավ: Այդ րոպեին ես, նկատելով մեկ տեսակ խոշոր կաթիլներով քրտինք Հայրիկի ճակտին վրա, անմիջապես ասացի.

— Հայրիկ, այժմ անկարող եք ստորագրել: Ավելի լավ է թողնենք. վաղը կստորագրեք, մանավանդ որ շտապողական բաներ էլ չեն:

— Հա՛, լավ, վաղը կրեքես, — ասաց Հայրիկը:

Ու ես հավաքելով օրագրները, անմիջապես դուրս ելա յուր մոտից ու մտնելով դիվանատուն, կանչեցի ինձ մոտ Հայրիկի եղբոր թոռը, Վահան անունով: Այդ օրերին խորեն խրիմյանը, Հայրիկի եղբոր որդին, բացակա էր Էջմիածնից հիվանդության պատճառով: Թիֆլիզ էր բժշկվելու համար: Այս երկուքն էին Հայրիկին խնամողները, բացի սովորական շաթիր սպասավորեն:

— Վահան, Հայրիկը հիվանդ է, — հարցուցի:

— Այո՛, քիչ մը տկար է, մրսեր է: Զյունը որ սկսեց, վատելափայտ չունեինք, որ վառարանները վառեինք: Հագի՛վ հագ այսօր կրցինք «Դո՛ի ազգիեն» ցախ քերել տալ: Այն էլ թաց է, լավ չի վառվեր: Ամբողջ օրը կը վառենք. բայց և այնպես, շատ քիչ են տաքացած սենյակները:

— Բայց ի՞նչ է հիվանդությունը: Բժշկին կանչե՛ր եք:

— Ո՛չ: Կզանգատի, թե ծնկները կցավին: Սրունքներն ալ քիչ մը ուռած կերևան:

Այս ըսելով, ես անմիջապես մեր բժշկի (Կարապետ Տեր-Խաչատրյան) հետևից մարդ յրկեցի և Վեհարան հրավիրեցի: Ասեմ, որ շատ հմուտ և փորձված բժիշկ էր: Հայրիկը շատ էր վատահում նրան: Տեր-Խաչատրյանը վանքի և ճեմարանի բժիշկն էր: Համեստ, խոհեմ և իր գործը գիտցող բժիշկ էր, հեռու՝ միանգամայն շրջապատի ինտրիգներից: Ինքնուրույն և անկախ և մանավանդ չենթարկվող սովորական ըսիքսավներուն:

Ծաթիր Հարությունին պատվիրեցի, որ, երբ բժիշկը գա, նախ դիվանատուն ինձ մոտ մտնի, ապա թե Վեհափառին գա:

Կես ժամ չանցած բժիշկը եկավ:

Մինչ այս, մինչ այն արդեն մութն էր:

Բժշկին մանրամասնորեն պատմեցի և նկարագրեցի այն բոլորը, ի՞նչ որ տեսել և դիտել էի: Ասացի և այն թե, Վահանի խոսքերին նայելով, Հայրիկի ծնկները կցավին և սրունքներն ալ ուռած կերևան:

Բժիշկը ներս մտավ Հայրիկի մոտ: Ու բավական երկար մնաց մոտը: Դուրս գալով

Հայրիկի ննջարանից, բժիշկը եկավ դիվանատուն ինձ մոտ: Ասաց, որ Հայրիկը առանձին հիվանդություն չունի: Ծիշտ է, փոքր-ինչ մրսած է, բայց վտանգավոր չէ այդ: Վտանգավորը նրա ծերությունն է, իսկ հիվանդությունը ծերության հիվանդություն է որ անբժշկելի է: Այդ մեծ ծերունին, ասաց բժիշկը, ինչպես մոմ հալվել-վերջանալու վրա է: Սիրտը շատ թույլ է: Ուտքերի ուռչելու պատճառն էլ այդ է, ասաց բժիշկը: Եվ խնդրեց, որ Երևանից բժիշկներ հրավիրվին կոնսիլիումի համար:

Տեսնելով, որ դրությունը շատ լուրջ է, ես անմիջապես Սինոդի անդամներին, միաբանության ավագներին, Սինոդի պրոկուրորի պաշտոնակատարին, ճեմարանի տեսուչ Մ. Բերբերյանին, ուսուցիչներից մի քանիսին հրավիրեցի Վեհարան և առաջարկեցի բժշկին գեկուցանել նրանց այն բոլորը, ինչ որ ինձ էր ասել՝ Հայրիկին տեսնելուց հետո:

Բժշկի գեկուցումը լսվել է վերջ, իր իսկ առաջարկությամբ որոշվեցավ անմիջապես, արտաքու կարգի հետագրով, Երևանից հրավիրել բժ. Ար. Տեր-Ավետիքյանին և բժ. Հ. Հովհաննիսյանին: Այս բոլորը կատարվեցավ հոկտ. 26-ին, ուրբաթ:

Իմ առաջարկությամբ և խնդրանք այդ գիշերը մեր բժիշկը՝ Տեր-Խաչատրյանը, մնաց Վեհարանում: Քանի մը անգամ մտավ Հայրիկի մոտ, որը համարյա թե անքուն անցուց այդ գիշերը: Ե՛ս ևս եղա Հայրիկի մոտ գիշերը երկու-երեք անգամ:

*
*
*

Հետևյալ օրը, հոկտ. 27-ին, շաբաթ, առավոտյան կանոխ Երևանից հեռագրով հրավիրված բժիշկները Էջմիածնում էին:

Նախ մեր բժիշկը գեկուցեց նրանց Հայրիկի հիվանդության մասին: Ասաց այն, ինչ որ նախընթաց օրը ինձ էր պատմել և սինոդականներին և մյուսներին գեկուցել էր: Իսկ այդ միջոցին ես մի քանի անգամ եղա Հայրիկի մոտ, նախապատրաստելու համար իրեն, թե՛ Երևանից եկել են բժիշկներ Ա. Տեր-Ավետիքյան և Հովհաննիսյան, որոնք կամենում են իրեն ներկայանալ և իր օրհնությունը ստանալ: Այդ բժիշկները նախածանոթ էին Հայրիկին:

— Հա՛, կհասկնամ, Հուսիկ վարդապետ, այդ բժիշկներին դո՛ւ ես կանչել. անոնց ըսեր ես թե, Հայրիկ հիվանդ է, հասեք գիցք ազատեք... Է՛, թո՛ղ հրամեն, թո՛ղ գան:

Դուրս գալով Հայրիկի մոտեն, բժիշկներին հրավիրեցի Հայրիկի ննջասենյակը: Հայրիկը նրանց ընդունեց մահճակալի վրա նստած: Այնուհետև այլևս չվերկացավ մահճակալից:

Բժիշկները մոտ մի ժամ զբաղվեցին: Նրանց հարցերին, Հայրիկը իր սովորական հեզնությամբ էր պատասխանում ու անդադար կրկնում. «Բժիշկ, բժշկեա զանձն քո», ավետարանական խոսքը:

Կհիշեմ, ինչպես այսօր, այն միջոցին, երբ բժիշկներն իր մոտ էին, Հայրիկի արնակա-

թիֆիլիզ եւ էի պաշտոնապես հեռագրել առաջնորդին: 27-ի երեկոյան Կովկասի այլ և այլ քաղաքներից բազմաթիվ հեռագրեր էին հասնում Վեհարան պաշտոնական անձինքներից, հասարակական և ազգային հաստատություններից և այլն, որոնք կխնդրեին տեղեկություն տալ իրենց Հայրիկի առողջու-



Նարեկա վանքը

լած աչքերը, անշուշտ անքնությունեն, թավշա գլխարկը հագած և խորը, համարյա մինչև աչքերը քաշած և սիկարեթը ձեռքին: Կծխեր հա՛ կծխեր ու անվերջ կծխեր և սուրճ կպահանջեր: Ամբողջ մարմնով շարունակ կողողար այդ Վեհափառ ծերունին և անդադար կկրկներ, կմեռնե՛մ, հա՛ կմեռնեմ:

* *

Մինչ բժիշկները ներսն էին Հայրիկի մոտ, Սիմոնի անդամները, միաբաններից շատերը, ճեմարանի տեսուչը, պրոկուրորի պաշտոնակատարը և այլն դիվանատանը կսպասեին անոնց դուրս ելնելուն: Բժիշկները, դուրս գալով Հայրիկի մոտեն, եկան դիվանատուն ու անմիջապես արձանագրություն կազմեցին Հայրիկի հիվանդության մասին, գոր վավերացուցին իրենց ստորագրությամբ: Ստորագրեցին նաև բոլոր ներկա եղողները:

Մինչ այս, մինչ այն Հայրիկի հիվանդության լուրը տարածվել էր ամբողջ շրջակայքում, ինչպես նաև Թիֆլիզ, Բաքու և այլն:

Ժյան մասին: Նույն օրը երեկոյան բժիշկները վերադարձան Երևան: Նրանք ունեին իրենց մասնավոր հիվանդանոցները Երևանում, որտեղ մոտ 50 հոգի կդարմանվեին: Խոստացան հետևյալ օրը կիրակի վերադառնալ Էջմիածին:

Հայրիկը այդ գիշերը (շաբաթ) բավական անհանգիստ անցուց: Բժ. Տեր-Խաչատրյանը ամբողջ գիշերը մնաց մոտը: Ես ևս, գիշերվան ընթացքում, քանի մը անգամ մտա Հայրիկի մոտ: Ամեն անգամ ինձ տեսնելով, Հայրիկը հարցնում էր ինձ.

— Ի՞նչ լուր ունիս դրսի աշխարհեն:

— Մի առանձին նորություն չկա, լինում էր ամեն անգամ պատասխանա:

* *

Հետևյալ առավոտյան (կիր. հոկտ. 28) բժ. Տեր-Ավետիքյանը և Հովհաննիսյան ճի՛շտ որ վերադարձան: Լսելով բժ. Տեր-Խաչատրյանի համատու գեկույցը Հայրիկի վիճակի մասին, նրանք ներս մտան: Ես

ալ գնացի նրանց հետ: Եկան նաև Սինոդի անդամները: Բժիշկները հարցախորժ անելով Վեհափառ Հիվանդին, քննելով նրա սիրտը, բռնելով զարկերակը, լսելով շնչառությունը և այլն, դուրս եկան և կազմեցին երկրորդ արձանագրությունը, որի մեջ նկարագրելով Հայրիկի հիվանդությունը մանրամասնորեն, իրենց ստորագրություններով վավերացնելով զայն, հանձնեցին ինձ՝ հայրապետական դիվանի թղթերի մեջ պահելու համար: Բժիշկները միաձայն կարծիքն այն էր, որ Հայրիկը յուր վերջին ժամերն է ապրում: Նրանք ասում էին, թե ճրագի նման հալվել է և շուտով վերջանալու վրա է: Եվ իսկապես Հայրիկը չէր գանգատվում ցավից: Նա ցավ չուներ և անդադար օդ էր պահանջում: Չունէ տվեք ինձ, կկրկնեք շարունակ: Ծաբաթ ու կիրակի Հայրիկը ո՛չ մի կերակուր չընդունեց, բացի սուրճից և սիրտնով թեյից: Ամբողջ ժամանակ գիտակցությունը լիովին տեղն էր: Միշտ կրկնելու թե, ինքը տակալին պարտքեր ունի կատարելու առ ազգն ու եկեղեցին: Կիրակի երեկո Հայրիկի վիճակը զգալի կերպով ծանրացավ: Զայնը մարեց: Կաշիքը լավ չէին տեսնում և մի տեսակ փոս ընկած էին: Կիրակի երեկո, ուշ ատեն, սենյակս երթալես առաջ, բժիշկ Տեր-Խաչատրյանին, մի կողմ կանչելով, խնդրեցի իրմե, որ եթե գիշերվան մեջ Հայրիկի վիճակը ծանրանա, ինձ իմաց տա: Խոստացավ:

Ընկերներս, հավաքված իմ սենյակը, ինձ կապասեին: Ես նրանց պատմեցի ա՛յն բոլորը, ինչ որ այդ օրը անցել էր Վեհաքանոնում Հայրիկի հիվանդության շուրջը:

Առավոտյան կանուխ, տակալին արշալույսը չբացված, իմ ննջասենյակի դուռը ուժգնությամբ ծեծեցին:

— Ո՛վ է:

— Դանբաշին եմ (Վեհաքանի դրսի ծառայապետը):

— Ի՞նչ է, ի՞նչ կուզես:

— Բժիշկը Զեզ Վեհաքան է կանչում:

Պարզ էր, որ Հայրիկի վիճակը ծանրացել էր և բժիշկը գիտ կկանչեր Վեհաքան:

Արագ-արագ լվացվեցի, հագնվեցի և շտապեցի Վեհաքան:

Այդ գիշերը Հայրիկը պառկել էր առաջին դահլիճի մեջ, որ յուր սովորական ընդունարանն էր:

Հասնելով Վեհաքան, անմիջապես մտա այդ դահլիճը: Հայրիկին տեսա՝ շատ դժվարությամբ շունչ առնելիս: Զիս նանչցավ և ճիգ անելով, ուզեց գլուխը բարձրացնել, բայց ես չթողի:

Ու ասաց.

— Հուսիկ վարդապետ, կտեսնե՞ս կմեռնի:

Ես տխուր էի և լուռ: Խոսք չէի գտնում ա-

սելու: Սուկալի կերպով ազդվելով, արտասուքի կաթիլներ էին գլորվում աչտերիս վրայն ներքև:

Հայրիկը նորից կրկնեց:

— Հուսիկ վարդապետ, կմեռնի: Պարտքս չկարողացա լիովին կատարել: Աս վանքը Զեզ կթողում: Իմ մահես վերջը Դուք կանալարեցեք:

Ու այնուհետև ալ չխուսեց Հայրիկը և նրա պերճախոս լեզուն լուեց հավիտենականապես և արծվի սրատես աչքերը գոցվեցին ընդմիշտ:

Առավոտյան ժամը 5-ն էր:

Հոգեվարքը սկսվեց: Հայրիկի երեսը ծածկեցին քողով:

Ես, հրավիրելով ավագ լուսարարապետին, խնդրեցի, որ «Երրորդը» զարնեն (Մայր տաճարի զանգերը), երեք անգամ, որով միաբանները հրավիրվում էին Վեհաքան, թեև մինչ այդ էլ՝ արդեն շատերը եկել էին Վեհաքան:

«Երրորդի» վրա միաբանությունը համարյա թե ամբողջապես հավաքվեց Վեհաքան: Շուտով եկավ Սինոդի պրոկուրորի պաշտոնակատարը, ծառայողները, ճեմարանի տեսուչը և ուսուցիչներից ոմանք:

Իսկ անդին, սովորական ընդունելության դահլիճին մեջ, ուր փոխադրված էր Հայրիկի մահճակալը ըստ յուր ցանկության, Հայրիկ հոգեվարքի մեջ էր. տուկալի կերպով կպալքարեր մահվան դեմ: Հոգեվարքը տևեց երկու ժամից ավելի:

Բոլոր ներկա եղողները կանգնած էին դահլիճում և ակնաւատես էին Հայրիկի հոգեվարքին: Կային նաև Վաղարշապատից մի քանի հոգի:

Ժամի ոթի մոտերը, լույս երկուշաբթի, հոկտ. 29-ին՝ Հայրիկը վերջին անգամ խորը շունչ քաշելով, ավանդեց յուր հոգին:

Այսպես հանգչավ ի Տեր Հայոց Հայրիկը Էջմիածնի միաբանության ներկայության, բաց կերպով և ոչ թե այնպես, ինչպես յուր նախորդը մթության մեջ՝ կանկաժելի պայմաններում մեջ:

Բժիշկները հաստատեցին Վեհափառ Հայրիկի մահը: Կազմվեցավ անմիջապես արձանագրություն, գոր վավերացուցին իրենց ստորագրություններով: Ստորագրեցին նաև ներկա եղողներից ոմանք:

*
*
*

Սինոդը անմիջապես հավաքվելով, նիստ գումարեց: Վեհափառ Հայրիկի մահվան մասին օրագիր կազմելով, պաշտոնական հեռագրներ ուղարկեց բոլոր ռուսահայ թեմերը, Պարսկաստան, Եվրոպա, Ամերիկա, Պոլսի և Երուսաղեմի պատրիարքներին,

ինչպես նաև Կովկասի փոխարքային: Թաղման օրը որոշվեցավ կիրակի՝ նոյեմբեր 5-ին: Ըստ օրինի, կաթողիկոսի մահվանից և մարմինը տաճար փոխադրվելուց հետո, Սիմոնը, յուր ամբողջ կազմով, ի ներկայության պրոկուրորի, Վեհաբանի բոլոր գույքերի ցուցակը կազմեց, ինչպես նաև կաթողիկոսի անձնական հարստության:

Թաղումը տեղի ունեցավ որոշված օրը: Թաղվեցավ Ներսես Աշտարակեցու կողքին: Թաղման արարողության ներկա էին թեմերից եկած հոգևորական և աշխարհական պատգամավորները: Փոխարքայության կողմից ներկա էին՝ Փոխարքայի խորհրդի անդամ Հագել և գնդապետ Հագարև՝ Կարսի հերոս զորավար Հ. Լագարևի որդին: Խոսվե-



Խրիմյան Հայրիկի ննջասենյակը

Հայրիկի գրպանեն դուրս եկավ քանի մը ոտքի և քանի մը հատ ալ արծաթ 15 և 20 կոպեկանոցներ: Այս էր նրա թողած դրամական հարստությունը:

Ընորհիվ այն հանգամանքի, որ Հայրիկը ի Տեր հանգչավ բաց կերպով, ահագին բազմության աչքի առջև, տեղի չունեցան այն անախործությունները, որոնք տեղի էին ունեցել յուր նախորդի՝ Մակար կաթողիկոսի մահվանից հետո, երբ նրա անձնական ծառան՝ հաջի Հակովբը, քրոջ թողը՝ Բ. Տեր-Պետրոսյան, որպես կաթողիկոսի անձնական հարստությունը և Վեհաբանի գույքը կողոպտողներ, բանտարկվեցան:

ցան պաշտոնական դամբանական, զոր արտասանեց պատարագիչ Արիստակես արքեպ. Դավթյան: Իսկ թաղման արարողությունը վերջանալուց հետո՝ խոսվեցավ բազմաթիվ անպաշտոն ճառեր, ի ներկայության խոտն բազմության, որ հավաքվել էր Էջմիածնի շրջակա հայ գյուղերից:

Օղը շատ աննպաստ էր: Ծարունակ անձրեվում էր: Բնությունն էլ կարծես սգակից էր և կուլար ազգի և եկեղեցու հետ իրենց հասած ծա՛նր կորստի պատճառով:

ՀՈՒՍԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ